# Քնար Հայկական

Ա. Տրցակ 1861. 1. 2. 3. 4. 5. 6. 7. 8. 9. 10

Բ. Տրցակ 1862 1. 2. 3. 4. 5. 6.

1908. 1 2. 3.

II Կ
Ք. 730

# ՊԱՆԴՈՒԽՏՆ ԱՌ ԼՈՒՍԻՆ




2013
ԲԲ-2009
131237
784
Բ-72
686-2017
(940-2009)
(7462)







ՀՀ Ազգային գրադարան
NL0541023




Ջի՛ փայլելու՜ որդիք Հայկեան
Մէկտեղ հրճուին և ցնծան,

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն:

Վերցուր աչքդ Յերկնից կամար
Փայլէ հեռուն աստղ մի պայծառ.
Եւ դու ՚ո հայ զարթիր սիրտ առ
Հայոց բաղդըն ալ չէ խաւար:

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն:

Ըլլամք ուրախ և խնդում
Նախանձ, վրէժ, ձեզ թողում
Անդունդք և վէհք անհատնում,

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն:

Փորձմը ըրինք բաժանման,
Փորձմալ ընենք միութեան.
Լեցուի փափաքդ Հայաստան
Տես որդիք քո միանան:

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն,

Ինչ և ընեմք ինչ ՚կերպ առնեմք
Ով՛ չգիտեր թէ մեք հայ եմք.
Ով՛ չգիտեր թէ եղբայր եմք,
Արիք ծիծաղ դիմօք երգեմք:

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն

Ո՛ Բանուոր ո՛ր օրէնքներ
Կը պատուիրեն թէ մի սիրեր
Ազգիդ օգուտն ու բարիքներ.
Սէրդ գաշն է յերկինս, ՚ի վէր

Կեցցէ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն:

681
686